2022, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (598)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

18 հունվարի

Մայր Աթոռի եւ Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հովանու ներքո գործող հայորդյաց տների տնօրենությանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի եւ Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հովանու ներքո գործող հայորդյաց տների տնօրեններին ու փոխտնօրեններին:

Հանդիպման սկզբում Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Հարություն վրդ. Կիրակոսյանը հայորդյաց տների տնօրենության անունից շնորհավորեց Նորին Սրբությանը Ամանորի եւ Սուրբծննդյան տոների առիթով՝ մաղթելով քաջառողջություն եւ երկարամյա անսասան հովվապետություն՝ ի փառս Հայ Եկեղեցու եւ հայրենիքի:

Հայորդյաց տների տնօրենության անունից Ամենայն Հայոց Հայրապետին Ամանորի եւ Սուրբծննդյան տոների կապակցությամբ իր շնորհավորանքները հղեց նաեւ հայորդյաց տների տեսչի ժամանակավոր պաշտոնակատար տիկին Լիանա Առաքելյանը:

Նորին Սրբությունը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով հայորդյաց տների տնօրենությանը, մեծապես կարեւորեց հայորդյաց տների առաքելությունը հայ ժողովրդի եւ Եկեղեցու կյանքում: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց հայորդյաց տների տնօրենությանը, մանկավարժներին եւ վարչության անդամներին՝ նախանձախնդիր ու նվիրյալ աշխատանքի համար՝ հորդորելով վերջիններիս շարունակել իրենց արդյունավոր առաքելությունը մատաղ սերնդին ճիշտ խնամք ու դաստիարակություն ապահովելու գործում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ հայորդյաց տների առջեւ ծառացած խնդիրների հաղթահարման եւ վերջիններիս գործունեությունն առավել արդյունավոր դարձնելու ուղիներին:

24 հունվարի

Աշոտ Մինասյանի՝ Պաշտպանության խորհրդի ներկայացուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սյունյաց թեմի թեմական խորհրդի ատենապետ, «Սիսական» ջոկատի հրամանատար, գնդապետ Աշոտ Մինասյանի՝ Պաշտպանության խորհրդի ներկայացուցիչներին՝ առաջնորդությամբ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վրդ. Հակոբյանի:

Խորհրդի ներկայացուցիչները Նորին Սրբությանը ներկայացրեցին կալանքի մեջ գտնվող տիար Աշոտ Մինասյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման իրավական գործընթացների մանրամասները՝ մտահոգություն արտահայտելով նրա առողջական վիճակի եւ կալանքի մեջ գտնվելու անհամատեղելիության առնչությամբ:

Նորին Սրբությունը, բարձր գնահատանքով անդրադառնալով տիար Մինասյանի հայրենանվեր ու եկեղեցասեր գործունեությանը, միաժամանակ արձանագրեց, որ եկեղեցին զերծ է մնում իրավական գործընթացներին միջամտություններից: Մայր Աթոռի սպասումն է, որ դատավարական գործընթացներն իրականացվեն անաչառության ու բազմակողմանիության սկզբունքներով, եւ նկատի առնվի նրա առողջական վիճակը: Նորին Սրբությունը նաեւ գնահատանք հայտնեց Պաշտպանության խորհրդին՝ իրենց մարդասիրական նախաձեռնության համար:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձ կատարեց երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին եւ տիրող իրավիճակին՝ աղոթելով, որ Տիրոջ օրհնությամբ ու համազգային ջանքերով հաղթահարվեն մեր ժողովրդին հուզող խնդիրները:

Հանրապետական մաղթանք Հայոց բանակի օրվա առիթով

Հունվարի 27-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Արմավիրի թեմի Ս. Աստվածածին եկեղեցում (ք. Էջմիածին) Հայոց բանակի օրվա կապակցությամբ կատարվեց Հանրապետական մաղթանք:

Սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչներ, Մայր Աթոռի միաբաններ եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գնդերեցներ:

Հոգեւոր դասը եւ արարողությանը ներկա զինվորականներն ու ժողովուրդը աղոթք բարձրացրեցին առ Աստված Հայաստանի եւ Արցախի խաղաղության, անսասանության ու Հայոց բանակի հաղթական ընթացքի համար:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետը Հայոց բանակի օրվա առիթով իր խոսքն ուղղեց եկեղեցում ներկա սպաներին, զինվորներին, գնդերեցներին եւ հավատացյալներին. *«Այսօր համախմբվել ենք Սուրբ Էջմիածնում Հայոց բանակի ստեղծման 30-ամյակի առիթով՝ աղոթելու մեր երկրի խաղաղության համար եւ հայցելու, որ Տիրոջ օրհնությունը, պահպանությունն ու զորակցությունը միշտ լինեն Հայոց բանակի հետ:*

Մեր հայրենիքի անկախությանը հաջորդած երեք տասնամյակում մեր բանակն անցավ հնարավոր ու անհնարին բոլոր փորձություններով, անցավ կազմավորման դժվարին ճանապարհը: Պարտադրված արցախյան պատերազմում փառավոր հաղթանակներ կերտեց, նաեւ ապրեց 44-օրյա վերջին պատերազմի արհավիրքների դառնություններն ու ցավը: Այդ իսկ պատճառով բանակի տարեդարձի ակնկալված ուրախությունը չէ, որ պարուրում է մեր սրտերն այսօր, այլ սոսկալի մորմոքը մարդկային եւ տարածքային ծանր ու վշտագին կորուստների եւ դեռեւս չամոքված կսկիծը մեր հոգելույս նահատակների:

Այսօր վերստին մեր հավաքական աղոթքով Աստծո արքայությունն ենք հայցում մեր զոհված հերոսների անմահ հոգիների համար, իսկ մեր հրամանա-

տարներին ու զինվորներին, որոնք քաջաբար մաքառեցին ու շարունակում են իրենց նվիրյալ ծառայությունը հայրենիքին, մաղթում հայկյան ոգի եւ հայկյան բազկի հաղթություն, ամրություն, կորով եւ իմաստություն:

Սիրելիներ, մեր ժողովուրդը պատմության ընթացքում հաճախ է հայտնվել ամենատարբեր աշխարհաքաղաքական բարդ իրադրություններում, երբ հարկադրված է եղել, կենաց ու մահու պայքար մղելով, պաշտպանել հայրենի հողն ու սրբությունները՝ անվարան վկայելով իր աստվածահրությունն ու հայրենասիրությունը: Դարեր շարունակ «զի Աստուած ընդ մեզ է» քրիստոնեական խոր համոզումը եւ «վասն հաւատոյ, վասն հայրենեաց» ոգեշունչ կարգախոսը առաջնորդող են եղել հայոց զորականներին՝ ուղենշելով հայրենյաց պաշտպանների ազգանվեր սրբազան առաքելությունը: Այսօր եւս մեր կյանքում Աստծո ներկայության գիտակցությունն ու «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նշանաբանը պետք է լինեն յուրաքանչյուր բանակայինի կյանքի հավատամքն ու հիմքը:

Մեր բանակի կազմավորման 30-ամյա տարեդարձի հանգրվանն առիթ է մեր զավակների անձնդիր ծառայության գնահատանքի եւ արժեւորման, առիթ է նաեւ ինքնաքննության, գործված սխալներին եւ թերացումներին լուրջ անդրադարձի, որպեսզի ի զորու լինենք դիմակայելու մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին եւ լավատեսությամբ մեր հայացքն ուղղելու դեպի ապագա: ➥ էջ 2

Հանրապետական մաղթանք Հայոց բանակի օրվա առիթով

➥ էջ 1

Պարտությունները՝ անդառնալի, եւ վերքերն անբուժելի են մնում, եթե մեզանում ուժ չենք գտնում վերիառնումի ու արարման, եթե գլուխ է բարձրացնում մեղավորներ փնտրելու ու պարտությունն իբրեւ անխուսափելիություն ներկայացնելու մոլուցքը, եթե հավատքը չի բխում անկեղծ սրտից ու մաքուր մտքից, որ կարող է Աստծուն մասնակից դարձնել հայրենիքը շենացնելու եւ հզորացնելու առաքելությանը: Երբ հավատարիմ ենք գտնվել մեր առաքելությանը, մեր հայրենին ծաղկել է, սահմաններն անառիկ են մնացել, երբ անհավատարմության, անարդարության որոմ է խառնվել մեր արդար ցորյանին, պարտվել ենք, նահանջ ապրել եւ երկիր կորցրել: Երբեք չմոռանանք առաքյալի խոսքը. «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կլինի մեզ հակառակ» (Հռ. Ը 31):

Սիրելիներ, Հայաստանի եւ Արցախի շուրջ ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ հրամայական է ժամանակների պահանջներին համարժեք Հայոց բանակի հզորացումը, որին պիտի նվիրվենք մեր ամեն կարելիությամբ: Մեր բանակի սրբազան առաքելությունը պիտի շարունակի մնալ մեր ժողովրդի ազգային ինքնության եւ ազատ ու անկախ կյանքի պաշտպանությունը մեր պատմական, հարազատ բնօրրանում, որտեղ մեր նախնիք իրենց հավատքի եւ հայրենասիրության անջնջելի հետքն են թողել: Հայոց Եկեղեցին եւ եկեղեցականը զորավիգ են Հայոց բանակին, ձեզ, սիրելիներ, հայրենիքի խաղաղության ու ապահովության, մեր արդար իրավունքների պաշտպանության կենսական հանձնառության մեջ:

«Թշնամին թող չասի, թե հաղթեցի, կամ հալածիչներս ցնծան, եթե սասանվեմ» (Սաղմ. ԺԲ 5). մեր բոլորի հայրենանվեր ծառայությամբ պիտի բացառենք մեր հասցեին արտաբերումը սաղմոսասացի այս խոսքերի: Հավատում ենք, որ փորձություններին պիտի դիմագրավենք ազգային միասնությամբ եւ մեր կյանքը պիտի պայծառացնենք նոր հաղթություններով ու հայրենաշեն ձեռքբերումներով:

Վերստին հայրապետական Մեր սերն ու օրհնությունը բերելով ամենքիդ՝ Հայոց բանակի 30-ամյակի առիթով, ի խորոց սրտի հայց ենք բարձրացնում առ Աստված հայրենիքի պաշտպանության դիրքերում իրենց կյանքն ընծայած մեր զավակների համար: Աղոթում ենք Հայոց բանակի հրամանատարական կազմի ու զինվորների ապահով ու անփորձանք ծառայության, հաղթանակների եւ հայրենի եզերքների խաղաղության ու անսասանության համար: Թող Տիրոջ ողորմությունը, խնամքը եւ Սուրբ Աջի հովանին լինեն Հայոց բանակի, մեր հայրենիքի, համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդի հետ, այսօր եւ միշտ. ամեն»:

Հանրապետական մաղթանքից հետո Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում կատարվեց պարգեւաբաշխություն:

Ի գնահատություն հայրենիքին մատուցած ծառայությունների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության միջնորդությանը, Հայոց Եկեղեցու ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Մովսես վրդ. Սարգսյանին:

«Անդրանիկ Օզանյան» մեդալով պարգեւատրվեցին քրեակատարողական հիմնարկների հոգեւոր տեսուչ Ռուբեն վրդ. Զարգարյանը, Սուրբ Շողակաթ վանքի վանահայր Արիս

«Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի արժանացրեց ՀՀ ՊՆ եւ ԱՀ ՊԲ մի շարք զինվորականների՝ գնդապետներ Կարեն Ջալավյանին, Արթուր Պողոսյանին, Նորայր Մկրտչյանին, Գագիկ Ասլանյանին, Արեն Սարգսյանին եւ Էրիկ Գրիգորյանին: Նորին Սրբությունը «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշան հանձնեց նաեւ ՀՀ ՊՆ տեղակալ Արման Սարգսյանին եւ ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Տիգրան Ղարիբյանին:

Ընդունելության ժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով, զինծառայողների հոգեւոր եւ հայրենասիրական դաստիարակության գործում զգալի ավանդի համար մի շարք եկեղեցականներ արժանացան նախարարության պարգեւների:

«Մարշալ Բաղրամյան» մեդալ շնորհվեց ՀՀ աբդ. Տոնոյանը, ավագ գնդերեց Պսակ քհն. Մկրտչյանը, գնդերեցներ Մանուկ քհն. Ջեյնալյանը եւ Տրդատ քհն. Գեւորգյանը: «Դրաստամատ Կանայան» մեդալ շնորհվեց գնդերեցներ Գագիկ սրկ. Հակոբյանին, Մինաս սրկ. Կարապետյանին, Լորիս սրկ. Անդրեասյանին, Սիմոն սրկ. Իգիթյանին, Գեւորգ սրկ. Միրզոյանին, Արթուր սրկ. Օհանյանին, Արթուր սրկ.Արամյանին:

Պարգեւաբաշխությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց ներկաներին:

Հունվարի 28-ի առավոտյան Ամենայն Հայոց Հայրապետը հոգեւոր դասի ուղեկցությամբ այցելեց Եռաբլուր, ուր կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ զոհված հայրենյաց պաշտպանների հոգիների խաղաղության համար:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են նորաօծ եկեղեցականների նշանակումները:

Տրդատ քհն. Գրիգորյանը ծառայության է նշանակվել ՀՀ զինված ուժերում, Սեպուհ քհն. Հակոբյանն ու Հովհան քհն. Հովհաննիսյանը ծառայության են կոչվել Արցախի թեմում, Տիրան քհն. Նահապետյանը ծառայության կանցնի Մասյացոտնի թեմում, Արտավազդ քհն. Սիմոնյանն իր ծառայությունը կբերի Գուգարաց թեմում, Ներսես քհն. Աշուղբաբյանը եւ Արամ քհն. Կարապետյանը ծառայության են նշանակվել Վայոց ձորի թեմում, Տիգրան քհն. Հակոբյանը ծառայության է կոչվել Սյունյաց թեմում, Մաղաքիա քհն. Գեւորգյանն իր ծառայությունը կիրականացնի Արագածոտնի թեմում, Արտաշես քհն. Հակոբյանն իր ծառայությունը կբերի Ուկրաինայի հայոց թեմում, Հուսիկ քհն. Դոխոլյանը ծառայության է կոչվել Գեղարքունյաց թեմում:

* * *

Հովհաննես քհն. Մարուքյանը, ազատվելով Վանաձորի հայորդյաց տան հոգեւոր տեսչի պաշտոնից, սույն թվականի հունվարի 20-ից ծառայության է կոչվել Արարատյան հայրապետական թեմում:

Պողոս քհն. Միքայելյանը, ազատվելով «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի հոգեւոր տեսչի պաշտոնից, սույն թվականի հունվարի 20-ից ծառայության է նշանակվել Մասյացոտնի թեմում:

Սահակ քհն. Սահակյանը, ազատվելով Արագածոտնի թեմում ստանձնած հոգեւոր պարտականություններից, սույն թվականի հունվարի 20-ից ծառայության է կոչվել Երեւանի «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում՝ որպես հոգեւոր տեսուչ:

Կարգալույծ են հռչակվել Մեսրոպ քհն. Խունոյանը եւ Պետրոս քհն. Բաղրամյանը

Հունվարի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մեսրոպ քհն. Խունոյանը:

Տնօրինության համար հիմք է ծառայել Մեսրոպ քահանայի կողմից հոգեւոր ծառայությունից հրաժարվելու խնդրագիրը:

Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել նաեւ Հարավային Ռուսաստանի հայոց թեմում ծառայած ու հանգստի կոչված, ապա ընտանիքով Միացյալ Նահանգներ տեղափոխված Պետրոս քհն. Բաղրամյանը՝ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմում հակականոնական գործունեություն ծավալելու եւ եկեղեցականին անհարիր վարքագծի համար:

Կարգալույծ եկեղեցականներն այսուհետ կդասվեն աշխարհականների շարքին՝ Արթուր Խունոյան եւ Արմեն Բաղրամյան ավագանի անուններով:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Նիկոլ Դուման —155

«Ի՞նչ էլ լինի, թե՛ թշնամուն եւ թե՛ բարեկամին հարգանք ու պատկառանք ներշնչողը, դժբախտաբար, դեռ կոպիտ ուժն է: Եվ մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի ուզում կորչել, պետք է լինի զենքի ընդունակ. միշտ պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար, մանավանդ քաղաքական ցնցումների վայրկյաններում»:

«Ով կարծում է, թե ինքնապաշտպանության ապահովումը կարելի է ձեռք բերել միշտ մնալով պաշտպանողական սահմաններում, նա չարաչար սխալվում է: Պաշտպանողական սահմաններում ապահով մնալու համար հարկավոր է, որ հարձակման ենթարկվող կողմն ընդհարման բոլոր կետերում լինի թվով ավելի, քան հակառակորդը, որակով բարձր եւ ունենա ավելի կատարելագործված զենքեր ու առատ ռազմամթերք: Բայց որովհետեւ բոլոր կետերում անկարելի է ունենալ այդ առավելությունները, ուստի անհրաժեշտ է դառնում որոնել կռվի համար ուրիշ՝ ավելի նպատակահարմար գործելակերպ (տակտիկա): ...Պետք է հարձակման փոխարեն անպատճառ հատուցել անհապաղ, որպեսզի հարձակվողը չխրախուսվի անպատիժ հաղթությունից եւ չանի նորանոր քայլեր: Այստեղից պարզ երեւում է, որ երկու դեպքում էլ հակահարձակումը դառնում է անխուսափելի»:

Նիկոլ Դուման



Նիկոլ Դումանի կիսանդրին Դիլիջանում. գործ՝ Հովհ. Մուրադյանի

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման անզուգական գործիչներից է Նիկոլ Դումանը, որն իր անջնջելի հետքն է թողել հայոց ազատամարտի պատմության էջերում: Նա եղավ հայ ժողովրդի համախմբման ու Հայաստանի ազատագրության համար պայքարի առաջմղիչ ուժը եւ գաղափարախոսը, բոլոր հնարավոր ու անհնար միջոցներով, անձնազոհությամբ լծվեց իր բաղձանքը կյանքի կոչելու նվիրական գործին:

Նիկոլ Դումանի կյանքն ու գործը, մտքերը, խստապահանջությունն ու անմնացորդ նվիրումը անկոտրում կամք, սեփական ուժերի նկատմամբ վստահություն եւ հաղթանակի հույս ներշնչեցին հայ ազատամարտիկներին, ազգի ու հայրենիքի պաշտպան ու պահապան քաջամարտիկներին:

Անվանի հայդուկ, ՀՅԴ կուսակցության անդամ Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) ծնվել է քահանայի ընտանիքում 1867 թ. հունվարի 12-ին Արցախ աշխարհի Խաչեն գավառի Ղշլաղ գյուղում (այժմ՝ գյուղ Ծաղկաշատ, Ասկերանի շրջան): Գրաճանաչ է դարձել քահանա հոր շնորհիվ, իսկ ինը տարեկանում ընդունվել է Շուշիի թեմական դպրոցը: 1887 թ. ավարտելով դպրոցը՝ Նիկոլ Դումանն աշխատանքի է անցել թեմական խորհրդում, ապա 2–3 տարի ուսուցչություն է արել Հյուսիսային Կովկասի հայկական դպրոցներում: 1891 թվականից նա ուսուցիչ է աշխատել Ատրպատականի Թավրիզ քաղաքի հայաբնակ Լիլավա թաղի դպրոցում: Դա շատ լավ հաշվարկված ու գիտակցված քայլ էր. Նիկոլ Դումանը շատ էր կարեւորում ուսուցչի դերն ազատագրական պայքարը գաղափարապես նախապատրաստելու գործում: Դումանը, որպես իսկական ուսուցիչ, գնաց դեպի ժողովուրդը, շփվեց ու գերազանց ճանաչեց հարազատ ժողովրդին, գիր ու գրականություն սովորեցրեց, ժողովրդի մեջ արթնացրեց ջերմ ու նվիրյալ հայրենասերի ազատասիրական ոգին:

Միքայել Վարանդյանի դիպուկ նկարագրությամբ՝ բարձրահասակ, նիհար, ջլուտ ու ոսկրոտ, մեջքը փոքր-ինչ կորացած, սեւ, կայծկլտող աչքերով, ուժեղ, խուզարկու նայվածքով Դումանն ուներ պայծառ միտք, արագ ըմբռնող էր, ինքնավստահ ու կորովի, հանդուգն եւ ահեղ: Հրամանատար էր՝ սիրտը՝ պողպատ, խոսքը՝ կտրուկ, վճիռը՝ անդառնալի: Նիկոլ Դումանը դաժան ու անխնա էր ոսոխների ու ներքին թշնամիների, դավաճանների նկատմամբ: Նա շանտաժիստների, դասալիքների, անկարգապահ զինվորների ու մատնիչների խարազանն էր ու պատուհասը: Նույնիսկ քրդերը երգեր հյուսեցին նրա վարած կռիվների եւ փայլուն ճակատամարտերի շարանի մասին:

Թավրիզում երկու տարի աշխատելուց հետո Նիկոլ Դումանը տեղափոխվում է Սալմաստի Ղալասար (Կալասար) գյուղն ու շարունակում ուսուցիչ աշխատել: Նա նպատակասլաց կերպով մոտենում էր Էրգրի սահմաններին, որպեսզի սահմանամերձ գյուղերում կուսակցական ու մարտական կառույցներ ստեղծի: Շուտով նա կապ է հաստատում Դերիկի վանքի (Սալմաստ քաղաքից մոտ 20 կմ դեպի հյուսիս-արեւմուտք՝ պատմական Զարեւանդի Ս. Աստվածածին վանք) շրջակա 4 հայկական գյուղերում գործող հայդուկային խմբերի հետ: Հենց Դերիկից էլ սկսվում է նրա մարտական ուղին: Ստեղծվում է «Վրեժ» մարտախումբը, որը պետք է անցներ Վան-Վասպուրական: Դաշնակցությունը մերժում է Նիկոլ Դումանի՝ խմբի իրականացնելիք աշխատանքներին մասնակցելու համառ պնդումները:

1895 թ. Նիկոլ Դումանը Սալմաստից մեկնում է Թիֆլիս եւ մասնակցում ՀՅԴ-ի շրջանային ժողովին: Այստեղ նա ծանոթանում է Քրիստափոր Միքայելյանի եւ Սիմոն Զավարյանի հետ, ծնվում է նրանց մտերմությունը, որը շարունակվում է մինչեւ նրանց կյանքի վերջը:

Վասպուրականի հայությանը զինելու եւ ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով Վանի հեղափոխական կազմակերպությունները հանգանակություն են կատարում: Հանգանակված միջոցներով զենք գնելու նպատակով Վանից Պարսկաստան են գալիս հեղինակավոր փորձառու ֆիդայիներ: Զենքերը տեղափոխելու համար Վանից Սալմաստ, ապա Դերիկի վանք է հասնում Դումանի գլխավորած զինված ջոկատը: Խումբը, Դերիկի վանք հասնելով, հայտնվում է քրդերի պաշարման օղակում: Այս անգամ Դումանի խմբում կային ընդամենը 12 հրացան եւ 25 ատրճանակ, իսկ մնացածներն անզեն հայեր էին, որոնք եկել էին զենք տեղափոխելու համար: Դումանն անզեն մարդկանց հրահանգում է, որ պատսպարվեն վանքի պատերի հետեւում, իսկ զենք ունեցողներին տալիս է որոշակի հանձնարարություններ. Շերոն, խմբապետ Միքոն, Հակոբը եւ Մանուկը ամրանում են վանքի հյուսիսարեւմտյան կողմում գտնվող բլրի վրա: Իսկ ինքը՝ Նիկոլ Դումանը, երեք հայդուկներով դիրքավորվում է վանքի հարեւանությամբ գտնվող ավերակներում, մնացած ֆիդայիները բարձրանում են վանքի տանիքը:

➥ էջ 5, 8

ՄԱՐԿ ԿՈՀԼԵՐ

ՀՈՒԴԱՆ

Արսել Պանյոլը (ֆրանսիացի հայտնի դրամատուրգ եւ կինոսցենարիստ) գրել է դրամատիկական մի հայտնի ստեղծագործություն, որի հերոսը Հուդան է: Ահա թե դավաճանն ինչ է բացականչում անձկության մեջ, իր չար գործն անելուց հետո. «Իսկ հիմա ի՞նչ եմ անելու. այլեւս չեմ կարող առաքյալ լինել. նրանք վանում են իրենցից, բայց ես հասկանում եմ նրանց. ո՞վ կընդունի մկրտություն Հուդայի ձեռքից: Այլեւս բրուտագործ չեմ կարող լինել. ո՞վ կուզենա իր յուղը պահել մի կճուճի մեջ, որը հունցել է Հուդան: Այլեւս չեմ կարող մշակել իմ հոր խաղողի այգին. ո՞վ կուզենա խմել Հուդայի քաշած գինին: Այլեւս չեմ կարող ընտանիք կազմել. ո՞վ կուզենա լինել Հուդայի որդին: Իմ հիշատակն անիծված է հավիտյանս հավիտենից, լավագույնները հրաժարվելու են աղոթել ինձ համար, այլեւս երբեք ոչ մի երեխա չի մկրտվի իմ անունից (...). ես ջարդված գործիք եմ, որն այլեւս ոչ մի բանի պետք չէ»:

Հուդայի անունը եղկելի է դարձել եւ հոմանիշը ստորության ու նենգության: Հուդան դարձել է չարության մարմնավորում: Բայց չմոռանանք. Հուդան նույնպիսի մարդ է, ինչպես եւ մենք: Նա հայտնվում է Ավետարաններում բոլոր այն գործող անձանց միջեւ, որոնք հավաքված են Հիսուս Քրիստոսի շուրջը: Նրանց մեջ մենք պիտի ինքներս ճանաչենք մեզ. նրանց միջոցով մենք հանդիպում ենք Տիրոջը. Հուդային չպետք է դարձնել չարիքի գերմարդ: Շատ հեշտ կլիներ հրաժարվել ու սովորել այն դասը, որ նա տալիս է: Աստվածաշնչյան գրքերը մեզ թույլ են տալիս Հուդային ըմբռնել խոցելի մարդու իր դրության մեջ ու հետեւել մարդկային նրա ողբերգությանը, մարդ, որը սխալ է գործել:

* * *

Նախ մի հարց է առաջանում. ո՞րն էր այն ճշգրիտ դերը, որ Հուդան խաղաց Հիսուսի վերջին օրերի ընթացքում Երուսաղեմում: Ի՞նչ արեց նա իրականում: Սրա պատասխանն է. նա գնաց քահանաների ու նահապետների մոտ, նրանց առաջարկեց որոշակի գումարի դիմաց Հիսուսին հանձնել իրենց ձեռքը: Ոստիկաններին ու զինվորներին տարավ Գեթսեմանիի այգի: Իր համբույրով նա ցույց տվեց նրան, ում պետք էր ձերբակալել: Սա ճիշտ է, եւ սակայն ամեն ինչ չէ, որ ասվում է այստեղ: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի չարչարանքի փաստն ուսումնասիրել նշանակում է վերապրել այդ վճռորոշ ժամերն այնպես, ասես մենք էլ այնտեղ ենք գտնվել: Պետք է զգալ, թե ինչպես են թրթռում այդ մարդկանց մարմիններն ու հոգին, եւ պարզորոշ տեսնել կատարվող դրամայի զարգացումը: Արդ, նա, ով կարդում է այդ հատվածները լարված ուշադրությամբ, անպայմանորեն ցնցվում է մի անհետեւողականությունից. դեպքերը չընթացան ըստ նախատեսածի: Կար մի կազմված ծրագիր, հաստատված ժամացուցակ, բայց ամեն ինչ խառնվեց իրար:

Երուսաղեմի քաղաքական պատասխանատուները, անհանգստացած Հիսուսի ժողովրդականությունից (մի՞թե չգոհ-



ինչպես տեղեկացնում են Մատթեոսն ու Մարկոսը, զգուշավոր են ու շրջահայաց: Գործողությունը «չպետք է տեղի ունենա տոնակատարության ժամանակ, որպեսզի ժողովրդի մեջ խռովություն չընկնի» (Մատթ. ԻԶ 5): Ես գիտեմ, որ Ավետարանների հայտնի թարգմանություններն արդեն իսկ դրանց մեկնաբանությունն են ըստ էության: Հունարեն բնագիրն ասում է. «տոնակատարության ժամանակ». դա կարող է նշանակել ուխտավորների անսահման բազմություն, որ հավաքվել էին Երուսաղեմում՝ հրեական Զատկի ու առանց թթխմորի հացի տոնը նշելու: Այդպես է ասում Աստվածաշունչը՝ թարգմանելով «ոչ տոնի ժամանակ»: Ես, սակայն, կարծում եմ, որ առաջնորդների մտադրությունն էր Հիսուսին ձերբակալել ու դատապարտել ոչ թե ամբոխից հեռու, այլ տոնից հետո: Երկու պատճառ խոսում են այդ վարկածի օգտին:

Նախ, 21–22 գլուխների մեջ, Մատթեոսը հավաստում է այն վախի մասին, որ քահանաներն ու նահապետները տածում էին ամբոխի հանդեպ: ➥ էջ 7, 8

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

Սկիզբը՝ 2021-ի թիվ 12–24, 2022-ի թիվ 1

ԺԲ

Այսօրվա միջին եւ երիտասարդ սերնդի արձակագիրների ստեղծագործությունների մեջ պատերազմը որոշ չափով ստանում է նոր մեկնաբանություն: Զորայր Խալափյանի, Հովհաննես Մելքոնյանի եւ ուրիշ շատ արձակագիրների պատերազմական գործերում ձեւավորվում է հերոսի մի նկարագիր, որն առավել չափով բնորոշվում է այդ իրավիճակին հատկանշական ողբերգական ճակատագրով: Պատերազմի մակերեսային, նկարագրական հաղթահարումը հոգեբանական նոր շերտեր է բացահայտում պատերազմի մասնակցի, ակամա զինվոր դարձած մարդու հոգեբանության մեջ: Այս տեսակետից նշված գործերի հետ մեկտեղ առանձնանում է նաեւ Ռուբեն Հովսեփյանի «Ճիչ» վիպակը: Թիկունքի սերնդի պատերազմական գրականությունն անմիջականորեն կրում է նույն այդ սերնդի կենսաճանաչողության դրոշմը: Ստեղծվում է ոչ թե պատերազմական կյանքի տարեգրությունը՝ դեպքերի ու իրադարձությունների փաստագրության գեղարվեստական շարադրանքը, այլ մարմին են առնում օրերի ցավը, թիկունքի դժվարին կյանքը, որ գոյանում են հացի հերթերից, տանը մնացածների կծկված սրտերից, մի լավ լուրի տեւական սպասումից, սեւ թղթերից, տուն վերադարձող հենակավոր, հաշմանդամ մարդկանցից, ռազմաճակատային գծից եկող առաջին տարիների նահանջի լուրերից, սրա-նրա պատմություններից, սովից, ցրտից եւ բազում այլ բաներից: Սերնդային հոգեբանության դիրքերից փոխվում է պատերազմի ճանաչողության եւ վերարտադրման տեսանկյունը:

Պատերազմը վիրավորել եւ թիկունք է նետել Սեդրակին, Գեւորգին, Սահակին: Սեդրակի մի ոտքը փայտ է: Սեդրակը խեղդում է քաղաքում թափառող բոլոր շներին, որովհետեւ հիշողությունը սարսափելի պատկերներ է կենդանացնում: Սեդրակն ինքն իր մեջ փորձում է հաղթել պատերազմը, սակայն իր մաքառումների մեջ այնուամենայնիվ պարտվում է՝ հիշողությունների, վախի ու սարսափի ահավոր ճնշման ազդեցությամբ: Եվ մի երեկո շներին խեղդելիս մի գամփռի ատամները խրվում են նրա կոկորդը: Գերմանական շները գզգզեցին նրան, իսկ այդ վիճակի հիշողությունն ու դրա թողած հետեւանքները՝ սպանեցին: Սեդրակը մեռնում է՝ իր մեջ շարունակվող պատերազմը ճզմելու ճանապարհին: Նա ցանկանում էր իր մեջ եւս հաղթել պատերազմը եւ բոլոր սարսափների առաջ հաստատել իրեն՝ թեեւ թերի, փայտե ոտքով, բայց հաղթանակող Սեդրակին: Սակայն նրա հաղթանակն ու պարտությունը կողք կողքի են:

Գեւորգը մեռնում է հիվանդանոցում: Պատերազմը խլում է նրանից ապրելու իրավունքը:

Սեդրակի եւ Գեւորգի կիսատ մնացած կյանքը շարունակվում է Սահակի մեջ, որ իր եւ իր նմանների ծամածռված կյանքի տաժանքն է քաշում: Սահակը դեռեւս ողջ էր, իսկ կինը նրա անունով սեւ թուղթ է ստանում: Միլիցիայի մայոր Բաբկենը փոստատարից վերցնում է նրա հետագա նամակները եւ Սահակին կամաց-կամաց դուրս մղում կնոջ՝ Սանամի հիշողություններից: Սահակը դառնում է կրկնակի դժբախտ: Հեռացող երջանկությունը նրան հասցնում է լինել-չլինել հասկացությունների սեփական փորձից ու ճակատագրից ելնող իմաստավորման: Կուտակվող խոհերը նրա մեջ կարծես համահարթում են լինել-չլինելու տարբերությունը, որովհետեւ լինելն այլեւս չունի արժեքի ներքին բովանդակությունը, եւ հետագա տարիները պետք է դառնան իզուր քարշ տված մի շան կյանք, իսկ չլինելն այնքան էլ ցավ չէ, որովհետեւ նա արդեն դուրս է մղվել կյանքից, կորցրել է տեղը շարքում եւ ավելորդ լինելու տագնապ է զգում:

Հովսեփյանը չի ջանում զգայավառ հերոսականությամբ մարմնավորել հերոսներին: Գեւորգը, Սահակը, Սեդրակը դառը ճշմարտությունների կրողներ են: Մոտալուտ մահվան սահմանային հոգեվիճակը մինչեւ վերջ բացում է նրանց էությունը, եւ ամեն ինչ դառնում է մերկ ու թափանցիկ: Լինել-չլինելու խաղը տանուլ տված մարդկանց սպասում է հոգեկան կողոպուտը, ներքին ամայությունը, մենակությունը: Եվ ցավն այն է, որ մենության սարսափն անմիջապես մահվան աչքերին նայելիս չկար, քանի որ տանը սպասողներ կային: Իսկ երբ կորչում է ամեն ինչ, արդեն սկիզբ է առնում գոյության ողբերգական մի փիլիսոփայություն: Կիսատ է մնում գոյության ընթացքը, եւ դա ոչ միայն մեռածների համար, այլեւ ողջերի. «Քանի կիսատ ապրած մարդիկ են ծխում իմ մեջ, քո մեջ, ողջերի մեջ»: Այս վիճակում արդեն Սահակի եւ նրա նմանների համար միեւնույն է՝ կմնա՞ թիկունքում, կշարունակե՞ն կիսատ մնացած կյանքը, թե՞ կմեկնեն ռազմաճակատ՝ մահվան հետ «պահմտոցի» խաղալու: Կենսափիլիսոփայության այս եղանակը նորություն է եւ պայմանավորված է ճգնաժամի մեջ գտնվող անհատի հոգեբանական ճշմարտությունների վերհանումով: Պատերազմական վիճակը հիմնիվեր վերափոխում է կեցության իմաստն ու երազանքի տարողությունը: ➥ էջ 6

«Գեւորգ Մարզպետունի» պատմավեպը եւ պատմական աղբյուրները

Մուրացանի «Գեւորգ Մարզպետունի» պատմավեպն անձնազոհության, հայրենասիրության, արտաքին նվաճողի դեմ զենքով դուրս գալու մի հզոր քարոզ է, որը գրվել եւ հրատարակվել է 1896 թ.: Վեպը Մուրացանի ռոմանտիկական պատմափիլիսոփայության ամենափայլուն արտահայտությունը հանդիսացավ: Սա գեղարվեստական խոշոր հաղթանակ էր, որը տարբեր առումներով հարստացրեց ժանրի արվեստը: Մուրացանն իր վեպը գրել է 1895–1896 թթ. հայկական ջարդերի առիթով: Սուլթան Համիդն արեւմտահայերի ազատագրական շարժումները ճնշելու, Հայկական հարցին վերջ տալու նպատակով կազմակերպեց արեւմտահայերի զանգվածային կոտորածներ: Այդ կոտորածներն սկսվեցին 1890-ական թթ. սկզբներին, բայց մեծ չափերի հասան հատկապես 1895–1896 թթ.: Բռնակալական Թուրքիան արյան մեջ խեղդեց Սասունի հայությանը: Այդ կոտորածների հետեւանքով թուրքական յաթաղանի զոհ գնաց ավելի քան երեք հարյուր հազար հայ: Գրեթե այդքան էլ գաղթեց: Արեւմտահայության որոշ մասն էլ հարկադրված դավանափոխվեց՝ ընդունելով մահմեդականություն: Ժողովրդի ապրած այդ ծանր ողբերգությունը չէր կարող աննկատ անցնել մեր գրականության կողքով: Այս իրադարձությունները հուզել են մեր լավագույն հեղինակներին՝ Հովհաննես Թումանյանին, Ավետիք Իսահակյանին, Հովհաննես Հովհաննիսյանին, Մուրացանին: Լինելով իր ժողովրդին հավատարիմ զավակ՝ Մուրացանը լիովին կիսում է իր ազգին պարուրած ցավն ու դժբախտությունը: Կատարելով հետազոտական հիմնավոր աշխատանք, ուսումնասիրելով X դարի Հայաստանի դրությունը, համեմատելով եւ համադրելով սկզբնաղբյուրները, վերստուգելով ու կապակցելով իրադարձությունները՝ Մուրացանը գրում է հայ դասական պատմավեպի մնայուն արժեքներից մեկը՝ «Գեւորգ Մարզպետունի» պատմավեպը: Կարելի է թվարկել պատմական աղբյուրների այն ոչ լրիվ ցուցակը, որից օգտվել է Մուրացանը վեպը գրելու ընթացքում. Հովհաննես Դրասխանակերտցի՝ «Հայոց պատմություն», Թովմա Արծրունի եւ Անանուն՝ «Պատմություն Արծրունյաց տան», Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ՝ «Պատմություն Տիեզերական», Մովսես Կաղանկատվացի՝ «Պատմություն Աղվանից աշխարհի», Ղեւոնդ՝ «Պատմություն», Մխիթար Այրիվանեցու, Կիրակոս Գանձակեցու, Սամուել Անեցու, Սեբեոսի, Արիստակես Լաստիվերտցու, Միքայել Չամչյանի աշխատությունները: Մենք առավել հանգամանորեն քննության ենք առել վեպի ստեղծման համար հիմնաքար հանդիսացող հետեւյալ երկու սկզբնաղբյուրները՝ Հովհաննես Դրասխանակերտցի՝ «Հայոց պատմություն», եւ Թովմա Արծրունի ու Անանուն՝ «Պատմություն Արծրունյաց տան»:

Պատմությունն ընդունելով որպես ուղեցույց եւ պատմությունից դասեր քաղելով՝ Մուրացանը գրում է իր հայտնի պատմավեպը՝ «Գեւորգ Մարզպետունի»-ն: Վեպն ունի պատմագեղարվեստական մեծ արժանիք:

Գառնու ամրոցի՝ «Հայկազն նահապետի այս դաստակերտի» նկարագրությամբ է սկսվում «Գեւորգ Մարզպետունի» պատմավեպը: Պատումն սկսվում է դեպքերի հետադարձ վերլուծությամբ: Հայոց գահին իշխում են Բագրատունյաց հարստության արքաները: Վեպի պատմական հատվածի զգալի մասը Մուրացանն ապահովել է Հովհաննես Դրասխանակերտցու

«Հայոց պատմության» միջոցով: Պատմիչն իր պատմությունը գրել սկսել է Բագրատունյաց թագավորության բավականին խառնակ շրջանում՝ կյանքի վերջին տարիներին: Օգտվելով իրեն նախորդող պատմիչներից՝ հատկապես Խորենացուց, նա սկսում է իր պատմությունը Նոյ նահապետից եւ համառոտ կերպով ներկայացնում հայոց պատմությունը՝ հասցնելով մինչեւ իր ապրած ժամանակները: Պատմիչը հանգամանորեն պատմում է Բագրատունյաց հարստության ձեւավորման, արքաների հաջորդականության, թշնամիների եւ նրանց բերած բոլոր աղետների մասին: Առաջաբանում Դրասխանակերտցին հակիրճ ներկայացնում է իր աշխատության բովանդակությունը: Պատմության մեջ առավել մանրամասն ներկայացված են Բագրատունի Աշոտ Առաջին թագավորի որդու՝ Սմբատ Բագրատունու եւ նրա որդու՝ Աշոտ Երկրորդի գահակալության տարիները՝ 890–928 թթ.: Դրասխանակերտցու պատմությունը հագեցած է պատմական մի շարք դեպքերով ու դեմքերով: Հայ արքաների, նախարարների ու իշխանների կողքին կան արաբ խալիֆներ ու ոստիկաններ: Պատմական մի շարք անձնավորություններ, որոնք պատմության մեջ կենտրոնական տեղ են գրավում, հետագայում դարձել են վեպի առանցքային կերպարները: Այդ կերպարներից է հենց ինքը՝ կաթողիկոսը՝ Դրասխանակերտցին, Աշոտ Երկրորդ արքան, արաբ ոստիկաններ Նսրը, Բեշիրը, Յուսուֆ ամիրան, Արծրունյաց եւ Սյունյաց նախարարներ ու իշխաններ: Իսկ ահա Գեւորգ Մարզպետունի իշխանը, որ թեպետ մեկ անգամ է հիշատակվում պատմության մեջ, հեղինակի փայլուն երեւակայության շնորհիվ դառնում է գաղափարակիր հերոս: ➥ էջ 6, 8

Նիկոլ Դուման —155

Նիկոլն իր ընկերներով

➥ էջ 3

Թշնամին դիմում է խորամանկ քայլի. փուշ ու տատասկ, խոտ ու խռիվ է փռում վանքի շուրջբոլորը եւ կրակ տալիս: Ծուխը պատում է չորս կողմը, շնչելը գնալով դժվարանում է: Վանքի ներսում գտնվող Դումանի խումբն անելանելի կացության մեջ է հայտնվում: Այդ օրհասական պահին Դումանն իրեն չի կորցնում, հրամայում է բոլորին հավաքվել դռան մոտ եւ պատրաստվում է անսպասելի, վճռական գրոհով պատռել պաշարման օղակը: Դումանի գլխում ծնվում է մի փայլուն մտահղացում. պետք է լուռ սպասել թաքստոցի մեջ այնքան, որ թշնամու ուժերը սպասողական դրությունից լարվեն, պրկվեն, ի վերջո՝ անգիտանան ու բթանան: Մտահղացումը, իհարկե, հաջողվում է. թշնամին կարծելով, թե վանքի ներսում հրդեհի ծուխը խեղդել է արգելափակված մարտիկներին, մի պահ դադարեցնում է հրաձգությունը: Օգտվելով քրդերի ուշադրության կորստից ու հանգստությունից՝ խումբը, Դումանի առաջնորդությամբ, կայծակի արագությամբ դուրս է թռչում վանքից, հրացանազարկ անում պաշարողներին, պատռում շրջափակման օղակը, ու մինչ քրդերն ուշքի կգային, հեռանում է ապահով վայր: Հնարամիտ հայդուկի անհավատալի քաջագործությունից ապշահար քրդերը նրան անվանում են Դուման (այսինքն՝ մառախուղ, փոթորիկ) կամ Ղարա Դուման (սեւ մառախուղ, փոթորիկ): Այստեղից էլ նրա «Դուման» մականունը:

Այնուհետեւ Դումանն ամենագործուն մասնակցությունն է ունենում Խանասորի (1897 թ. հուլիս) արշավանքի գաղափարական նախապատրաստության եւ իրականացման գործում: Նա արշավախմբին մասնակից հիսնյակներից մեկի հրամանատարն էր:

1904 թ. Դումանը փորձել է հասնել ապստամբ Սասունին օգնության, սակայն սահմանի վրա կռվի է բռնվել ու տեղ չի հասել: Նույն թվականին էլ անցել է Կովկաս, հաստատվել Բաքվում: 1905 թ. փետրվարին Բաքվում սկսվում է հայերի կոտորած: Դաշնակցության կենտրոնական կոմիտեն մատնվել էր խուճապի: Դումանը գտնվում էր Բաքվի շրջաններից մեկում, որտեղ աշխատում էր: Տագնապալից հեռագիր ստանալով՝ գալիս է Բաքու եւ իրեն հատուկ նվիրվածությամբ գործի անցնում: Ինքնապաշտպանության շտաբը գտնվում էր Իսահակ Մելիքյանի լուսանկարչատանը: Դումանը, իրադրությունը պարզելով, սթափեցնում է ժողովրդին, զգոնության կոչում: Փետրվարի 7-ին Դումանը վեց հոգով կարողանում է կանգնեցնել եւ հաղթել կատաղած, արյան ու թալանի ծարավ թուրք (կովկասյան թաթարներ) ամբոխին, մաքրել հայկական եկեղեցու շրջապատը գազազած ոհմակից: Դումանի հերոսության ու ռազմական տաղանդի, իր վարքագծով օրինակ ծառայելու մասին պահպանվել են մի շարք վկայություններ: Նրան օգնության են գալիս հին, փորձված ֆիդայիներ, նաեւ երիտասարդներ, համալրվում է ինքնապաշտպանության ջոկատը: Բացի հայկական թաղամասերը թուրքերից մաքրելուց՝ ջոկատը թուրքաբնակ կամ խառը բնակչությամբ թաղամասերից ազատում, փրկում է բազմաթիվ հայերի: Նա ոչ միայն կասեցնում է փետրվարի 7-ի թուրքերի հարձակումը, այլեւ հարկադրում է թուրքերին սպիտակ դրոշ պարզել: Հայերն ընդունում են հաշտության առաջարկությունը, տեղի են ունենում հոգեւորականների փոխադարձ այցելություններ: Սակայն վտանգը չի վերանում, ինքնապաշտպանության ջոկատները շարունակում են զինվել: Զենքը ձեռք էր բերվում մեծ դժվարությամբ, դրամական միջոցներ չկային:

1905 թ. փետրվարի 20-ին Երեւանում թուրքերը հարձակվում են շուկայի վրա, մեծ թվով հայեր սպանում ու վառում շուկան: Երեւանի նահանգում թուրքերի հարձակումներն սկսվում են Նախիջեւանից: Ինչպես եւ Բաքվում, թուրքերը գործում էին ցարական իշխանությունների հովանավորությամբ ու օգնությամբ, գավառապետն էր թուրք գեներալ Ալիխանով-Ավարսկին: Նախիջեւանի եւ Շարուրի հայությունը, որ թուրքերի համեմատ սակավաթիվ էր ու վատ զինված, կուտակվում է Շխմահմուտ գյուղում: Թուրք զինված ամբոխը, շրջակա մահմեդական բնակչության հետ միավորված, հարձակվում է հայ անզեն բնակչության վրա. զոհվածների թիվն անհաշիվ էր, ամենուր թալան, ավերում, հրդեհում: Թուրքերը, ըստ նախօրոք մշակված ծրագրի, ձգտում էին Նախիջեւանն իսպառ պարպել հայերից՝ գավառի անկախությունը հայտարարելու նպատակով:

Բավական լայն տարածություն ընդգրկող Երեւանի նահանգի, ինչպես նաեւ Զանգեզուրի գավառի ու Ելիզավետպոլ-Գանձակի նահանգի հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու եւ ղեկավարելու համար Երեւան է գալիս Նիկոլ Դումանը: Դա տեղի Դաշնակցության բյուրոյի որոշումն էր, որը համընկնում էր նաեւ Կուսակցության կենտրոնական կոմիտեի որոշման հետ: Դումանն ստանձնում է Երեւանի զինվորական հրամանատարի՝ նահանգի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի դերը: Ընտրությունը տեղին էր: Դումանն աչքի էր ընկել հատկապես Բաքվի կռիվների ժամանակ, թեեւ նա մինչ այդ էլ ակնառու կազմակերպչի ու փառապանծ մարտնչողի համբավ ու հեղինակություն ուներ: ➥ էջ 8

Բիոէթիկայի եւ իրավագիտության զարգացման հեռանկարները 21-րդ դարում

Սկիզբը՝ թիվ 1

Բիոէթիկայի սահմանադրականացումը

ՀՀ Սահմանադրության 2015 թ. փոփոխություններն ազդարարում են իրավագիտության տեսանկյունից բիոէթիկայի հարցերի քննարկման հույժ կարեւորության մասին: ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածում, որպես նոր բովանդակության իրավունք, ամրագրվեց ֆիզիկական եւ հոգեկան անձեռնմխելիության իրավունքը (*Գրականության մեջ արդարացիորեն տարանջատվում են անձնական անձեռնմխելիության իրավունք (security of the person) եւ ֆիզիկական ամբողջականության իրավունք (integrity of the person) եզրերը: Առաջինը ենթադրում է անօրինական կալանքի եւ ձերբակալման արգելքը, իսկ երկրորդը՝ ֆիզիկական եւ հոգեբանական անձեռնմխելիությունը: Կենսաբժշկության ոլորտում ֆիզիկական ամբողջականության իրավունքը հետազոտական նպատակներով մարդու օրգանիզմին միջամտությունից ազատության իրավունքն է: Тарасьянц Е. В., Международная защита и поощрение прав человека в области биомедицинских исследований. Автореф., канд. юрид. наук. М., 2010, с. 12*):

ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բժշկության եւ կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը, իսկ 4-րդ կետի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի, առանց նրա ազատ եւ հստակ արտահայտած համաձայնության, ենթարկել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետեւանքների մասին (*Նշենք, որ նմանաբնույթ սահմանադրական նորմեր ամրագրված են նաեւ եվրոպական մի շարք պետությունների Սահմանադրություններում: Այսպես՝ Հունգարական Սահմանադրության 3-րդ մասի համաձայն՝ արգելվում է եվգենիկական գործունեությունը, ֆինանսական շահույթ ստանալու նպատակով մարդու մարմինը կամ դրա մասերն օգտագործելը, ինչպես նաեւ մարդու կլոնավորումը: Շվեյցարիայի Սահմանադրության 119-րդ հոդվածով արգելվում է ցանկացած տարբերակով կլոնավորման եւ մարդու գենետիկ ֆոնդի միջամտությունը*):

ՀՀ սահմանադրական տեքստում «եվգենիկա» եզրույթն օգտագործվում է առաջին անգամ: Եվգենիկան (հունարենից՝ ազնվացեղ, տոհմական) ուսմունք է մարդկային բնույթը կենսաբանական եղանակով բարելավելու մասին: Ընդհանուր առմամբ, եվգենիկական փորձերի սահմանադրական արգելքի նպատակն է զսպել գիտական կամ քաղաքական կասկածելի նպատակներ հետապնդող, բնակչության գենոֆոնդի «լավասերման» հետազոտությունները, ինչպես նաեւ «գենետիկ նորմերի» սելեկցիան:

ՀՀ Սահմանադրության նշված նորմը ՀՀ իրավական համակարգի օրակարգ է բերելու, ի թիվս այլոց, հետեւյալ հարցերը.

—Մարդու իրավունքների եւ կենսաբժշկության մասին կոնվենցիայի (Օվիդեոյի կոնվենցիա) ստորագրման եւ վավերացման վերաբերյալ քննարկումները (*Կոնվենցիան 04.04.1997-ից բաց է ստորագրման համար: Այն ուժի մեջ է մտել 01.12.1991 թ.*):

—«Եվգենիկական փորձեր» սահմանադրական հասկացության ուսումնասիրությունը եւ սահմանների հստակեցումը: Նախ՝ ՀՀ Սահմանադրությամբ արգելվում է ոչ թե եվգենիկական գործունեությունն ընդհանրապես, այլ միայն՝ փորձերը, մինչդեռ արդեն բնակչության տեսակի ընտրության մի շարք մեթոդիկաներ անցել են զուտ փորձարկման փուլը եւ ինքնուրույն գործունեություն են: Երկրորդ՝ տարբերակվում են բացասական եվգենիկան (կոնկրետ անձի գենետիկայի բժշկական միջամտությունը՝ նրա անբուժելի հիվանդությունները վերացնելու նպատակով) եւ դրական եվգենիկան (մարդու ժառանգականության բիոտեխնոլոգիական միջամտությունը՝ նրա «ցեղատեսակի» սելեկցիոն փոփոխության, լավասերման նպատակով): Բարոյագետները նշում են, որ առաջին եվգենիկան սկզբունքորեն ողջունելի է, իսկ երկրորդը՝ կասկածների եւ առարկությունների տեղիք է տալիս (*Кучарева И..А., Современные биотехнелогии: социально-этические аспекты. Автореф. дис. канд. филос. наук. М., 2006, с. 5*):

—Եվգենիկայի սահմանադրական արգելքի համատեքստում ընթացիկ օրենսդրության համակարգային վերանայումը, մասնավորապես՝ «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կամավոր բժշկական ամլացման եւ արհեստական (արտամարմնական, փորձանոթային) բեղմնավորման նպատակով դոնորական սերմի զատորոշման եւ ընտրության իրավակարգավորումների ուսումնասիրությունը եւ հստակեցումը (*կամավոր բժշկական ամլացում՝ վիրաբուժական միջամտություն, որը կիրառվում է որպես մշտական բեղմնականխման եղանակ եւ կատարվում է միայն կամավոր սկզբունքով՝ անհատի (ամուսինների) իրազեկված համաձայնության հիման վրա*): Պետք է նկատի ունենալ, որ եվգենիկայի տեսակ են մարդու ընտրությունն ըստ սեռի, ինչպես նաեւ հիվանդ կամ սոցիալական տեսանկյունից անցանկալի «գենոֆոնդ» ունեցող մարդկանց վերարտադրման բացառումը՝ ամլացման եղանակով:

—Եվգենիկական փորձերը (գործունեությունը), մարդու վերարտադրողական կլոնավորումը, ապագա երեխայի սեռը պլանավորելու համար վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներ կիրառելը եւ բիոէթիկայի ոլորտում հանրորեն վտանգավոր այլ արարքները ՀՀ քրեական օրենսգրքում որպես ինքնուրույն հանցագործություններ նախատեսելը:

Բիոէթիկայի հարցերը ներթափանցել են նաեւ հանրային եւ մասնավոր իրավունքի տարբեր շերտեր: ➥ էջ 7

«Գեւորգ Մարզպետունի» պատմավեպը եւ պատմական աղբյուրները

➥ էջ 4

Վեպի կերպարներին առավել հանգամանալից կանդրադառնանք մեր այլ հոդվածներում:

Մ. Աբեղյանը գրում է. «Հովհաննես կաթողիկոսի այդ երկն իր մի խոշոր մասով ոչ թե սոսկ պատմություն է այս բառի սովորական իմաստով, այլ ինքնակենսագրություն կամ հիշողություններ, եւ իբրեւ այդպիսին՝ կյանքի անմիջական կենդանի կոնկրետ արտահայտություն է: Թեպետ ծերության ժամանակ գրի առնված, բայց սկզբի մասը մի կողմ թողած, մեծ թափով ստեղծված մի իսկական գրական գործ է դա, որ վկայում է հեղինակի մտավոր կարողությունը: Կարդալիս շարունակ տեսնում եւ զգում ենք հեղինակին, որ շատ զգայուն է դեպի ուրիշների տառապանքները» (*Աբեղյան Մ., Երկեր, հատոր Գ, Եր., 1968, էջ 483*): Այսպիսով՝ առավել մանրամասն պատմիչի



ուշադրության կենտրոնում է հայտնվում հայ ժողովրդի վիճակը 30–35 տարվա ընթացքում: Պատմիչը ներկայացնում է 10-րդ դարի սկիզբը, երբ արաբական խալիֆայության թուլացումից Հայաստանում զգալիորեն օգտվում են հետեւյալ նախարարական տները՝ Բագրատունիներ եւ Արծրունիներ: Նրանք ձգտում էին իրենց ազդեցությունն ու իշխանությունը տարածել ամբողջ երկրում: Թեպետ երկիրն արաբական գերիշխանության ներքո էր, սակայն Բագրատունիների ձեռքում էր կենտրոնացած ինչպես ռազմավարչական, այնպես էլ տնտեսական իշխանությունը: Աշոտ Առաջին արքան ջանք չէր խնայում թագավորությունն ամբողջ երկրում տարածելու եւ միասնական հայկական պետություն ստեղծելու համար: Նա երկրում հաստատում է կարգուկանոն, նշանակում իշխաններ, իսկ սպարապետության պաշտոնը վստահում է եղբորը՝ Աբասին: Այս մասին պատմում է Հ. Դրասխանակերտցին. «Հայոց մեծ սպարապետությունը Աշոտը տալիս է իր եղբայր Աբասին, որը քաջազուն, թիկնավետ, զորեղ, վայելչակազմ, պատերազմի մեջ կորովի ու ճարպիկ տղամարդ էր: Աջակցելով իր եղբայր Աշոտին՝ բոլորին հնազանդեցնում է ու գցում նրա լծի տակ: Շատ տեղերում բազմիցս արիություն ցուցաբերելով՝ նա շատերի աչքում հռչակավոր ու հոյակապ էր երեւում» (*Դրասխանակերտցի Հ., Հայոց պատմություն, Երեւան, 1995, էջ 139: Այսուհետ այս հրատարակությունից արված մեջբերումների պարագայում կնշվի միայն էջահամարը*): Այնուհետեւ պատմիչն անցնում է կատարում Աշոտի որդուն՝ Սմբատին, որ հաջորդում է հորը՝ նստելով հայոց գահին: Նորընտիր թագավորը պետական խոշոր գործիչ էր եւ իր հոր արժանի հաջորդը: Նա շարունակեց երկրի բարգավաճման գործընթացը, որին դժկամորեն էր վերաբերվում խալիֆայությունը: Նրանք Հայաստանը թուլացնելու համար որդեգրեցին հայ իշխանների միջեւ երկպառակություն առաջացնելու քաղաքականությունը: Շուտով առիթ ստեղծվեց միջամտելու հայ իշխանների միջեւ առաջացած տարաձայնություններին: Սյունյաց իշխանների եւ Արծրունիների միջեւ վեճ առաջացավ Նախճավան քաղաքին տիրելու պատճառով: Սմբատ թագավորն այդ վեճը լուծեց հօգուտ Սյունիքի: Գագիկ Արծրունին Սմբատին խնդրեց վերանայել վճիռը եւ իրեն վերադարձնել Նախճավանը, քանի որ այդ քաղաքն ի սկզբանե գտնվում էր Վասպուրականի կազմում: Սմբատն անդրդվելի մնաց եւ չփոխեց իր որոշումը: Գագիկ Արծրունին, խիստ դժգոհ մնալով Սմբատ թագավորից, ընծաներով շարժվում է Յուսուֆ ամիրայի մոտ եւ դավադրաբար բանակցություններ սկսում նրա հետ: Եվ քանի որ բանակցող կողմերից երկուսն էլ միայն մի նպատակ ունեին՝ վրեժ լուծել Սմբատ արքայից, այս հարցում միեւնույն որոշմանն են հանգում: Յուսուֆի միջնորդությամբ խալիֆը հայոց թագավոր է ճանաչում Գագիկ Արծրունուն: Ինքը՝ Դրասխանակերտցին, շատ լավ է հասկանում Յուսուֆի մտադրությունը, ուստի ուղեւորվում է նրա մոտ: Յուսուֆը սկզբում շատ լավ է ընդունում նրան, իսկ հետո խորամանկորեն բանտարկում է եւ խավարի մեջ նետում: Կաթողիկոսը դաժան կտտանքների է ենթարկվում եւ հերոսաբար դիմադրում բոլոր փորձություններին: Գարնանը Յուսուֆը գալիս է Հայաստան եւ իր հետ բերում նաեւ Դրասխանակերտցուն: Ոստիկանը հավաքում է բոլոր հարկերն ու տուրքերը, մի քանի անգամ զորք ուղարկում Սմբատ արքայի դեմ, անմարդկային չարագործություններ կատարում եւ վերջում էլ գլխատում հայոց արքային: ➥ էջ 8

Վաթունականների արձակագիրներ.

Ժամանակը եւ հերոսը

➥ էջ 4

Եվ պայծառ տեսլապատկերները վերածվում են դաժան, կեղեքող, մահվան հետ գոտեմարտող անհեթեթ իրականության:

Հովսեփյանը քննում է ոչ թե անմիջական երեւույթը, այլ դրա թողած ազդեցությունը: Պահը ներկայացվում է անցյալի ու ներկայի միասնությամբ. դա ստեղծում է հերոսների վարքագծի ու գործողությունների համար տեսանելի հիմք: Անցյալը ներկայանում է Սեդրակի գյուղական հիշողություններով, Սահակի երիտասարդական ու ընտանեկան կյանքով, մի խոսքով՝ այն բախտորոշ իրադարձություններով, որոնք շարունակվում են հերոսների հետագա կենսագրության մեջ: Անցյալի ու ներկայի, հիշողության ու գործող իրավիճակի համադրումը մեկ պահի մեջ կարեւոր հիմք է դառնում կերպարների հոգեբանական նկարագրի բացահայտման համար:

Թեեւ վիպակում հիշատակվող հերոսները, դեպքերը տարբեր են իրենց անհատական կյանքով, բայց նրանք իրենց կյանքի պատերազմական շրջանում ճակատագրով մեկ մարդ են՝ թիկունք նետված, կռվի համար անպետք զինվորներ, տառապող հոգիներ, որոնց նպատակը դառնում է հավասարակշռությունը խախտած կյանքի փիլիսոփայական վերիմաստավորումը: Այդ կերպարները միասնության մեջ ստեղծում են ամփոփ, մեկը մեկին լրացնող հերոսի նկարագիր:

Պատերազմական կյանքի անմիջական արտացոլքն է իր մեջ կրում նաեւ «Հայոց թաղը» վիպակը: Պատկերված է անմիջապես պատերազմին հաջորդող մի շրջան, երբ հիշողությունները մարդկանց ներկայանում են որպես դեռ չվարագուրված իրողություն, երբ պատերազմը դեռ շարունակվում է հիշողությունների, հիշատակների, ֆիզիկապես խեղված այրերի, որբ ու անտեր մնացած ընտանիքների մեջ: Կյանքը շարունակվում է պատերազմական օրերի հետեւանքների տրամաբանությամբ: Այդ հետեւանքները մնացել են մարդկանց հոգեբանության, վարքագծի եւ արտաքինի մեջ: Դա վիպակում ի հայտ է գալիս ջրբաշխ Խաթունի եւ գինեվաճառ Կարոյի հարաբերությամբ, նաեւ նրանով, որ Մարիամը հաճախակի ակնարկում է ամուսնու հաշմանդամության փաստը:

Ժամանակային լայն ընդգրկման մեջ՝ պապերի հիշողությունից մինչեւ պատերազմ եւ ապա թաղի առաջին նորածին մանկան ճիչը, դեպքերի եւ հերոսների նկարագրությունը դառնում է տարողունակ:

Հոգեբանորեն հիմնավորված՝ կյանքի գոյափիլիսոփայություն ունեցող հերոսներ է ստեղծում Հովսեփյանը: Հերոսներ, ովքեր խիստ բնորոշ են մեր իրականությանը՝ թե՛ անցյալի կյանքի առումով եւ թե՛ ընդհանրապես մարդկային կյանքի: Այս տեսակետից նշված գործերին առնչվում է նաեւ թիկունքի կյանքի մի դրվագ ներկայացնող «Մեր բաժին ճաշը» պատմվածքը: Ուշագրավ են նաեւ այլ ոլորտներ ընդգրկող «Խորանարդիկներով տունը», «Պատմության դաս», «Նոյը», «Առաջին կինը» պատմվածքները, որոնց եւս բնորոշ է կյանքի փաստի հոգեբանական յուրացումը:

ԺԳ

Ժամանակակից արձակի միջին եւ երիտասարդ սերնդի ստեղծագործության մեջ կարեւոր տեղ ունի մեր իրականությունն ու ընթացիկ կյանքը մարմնավորող գրական հերոսի հարցը: Այս առումով տարբեր ոլորտների մեջ իրենց նախասիրությունն են դրսեւորում Գեւորգ Արշակյանը, Կարեն Սիմոնյանը, Վլադիմիր Հարությունյանը, Վահագն Գրիգորյանը, Նորայր Ադալյանը, Ալեքսան Մեխակյանը: Մեկ-երկու գործի բացառությամբ՝ սա լուրջ գրականություն չէ, թեեւ այս անունները հակված են ներկայացնելու իրենց ժամանակը:

Գեւորգ Արշակյանի «Գնացքներ» վեպի կազմաշապիկի վրա կա այսպիսի մի հանձնարարական. «Վեպում հերոսներ չկան, սովորական մարդիկ են՝ զբաղված իրենց ամենօրյա գործով»: Գրական հերոսի դասական պատկերացմանը հակադրվող այսօրվա սովորական հերոսը, որի կյանքն աչքի չի ընկնում առանձին մեծագործություններով կամ խոր դրամատիկական, հոգեբանական, ողբերգական վիճակներով,



ներկայանում է որպես, այսպես կոչված, «հակահերոս», որ նույնն է, թե «վեպում հերոսներ չկան, սովորական մարդիկ են...»: Այս սովորական մարդիկ թեեւ, ըստ էության, հերոսներ չեն, բայցեւայնպես գրական հերոս են, որոնք ծնվում են կյանքից եւ ներկայացնում մարդկային նկարագրի մի տարատեսակ: Այս սովորական, շարքային հերոսների գրական կերպավորման առումով կողմնորոշման ընդհանրություն կա Արշակյանի եւ Վահագն Գրիգորյանի ստեղծագործությունների միջեւ:

Արշակյանի «Գնացքներ» ծավալուն վեպն ընդգրկում է ընտանեկան, աշխատանքային հարաբերությունների մի ոլորտ, որի մեջ հերոսը ներկայանում է իր համակրանքներով, հակակրանքներով, աշխատանքային գործունեության հանդարտ, դրամատիկ լարվածության չհասնող, ուժերի լիարժեք ծախսում չպահանջող կյանքի պատկերներով: Այս հանդարտությունը թեեւ երբեմն-երբեմն ունենում է պոռթկումներ, վերադասների դեմ ընդվզելու փոքր կրքեր ու բռնկումներ, սակայն դա չի դառնում բախտորոշ, չի դառնում հարցը միանգամից լուծող բախում, այլ ձգվում է հարաբերությունների տեւական ընթացքով: Վեպի հերոս Աբելի աշխատանքային գործունեության «հերոսական խիզախումը» այն է, որ փորձում է գնացքների չվերթն այնպես կազմակերպել, որ կարողանա երկու րոպե հատկացնել մի կիսակայարանում կանգնելու համար: Այս երկու րոպեն դառնում է աշխատանքային հիմնահարց, բախման հիմք, նաեւ հերոսի մարդասիրության ցուցանիշ:

Հերոսի գործունեության ընդգրկման այս նեղացումը, փոքրացումը կենսական հիմքեր ունեն: Բազմաթիվ հիմնարկներում այսօր մարդիկ զբաղված են այդպիսի փոքր, աննշան խնդիրներով, որոնք եւ ձեւավորում են նրանց հոգեբանությունն ու ներաշխարհը: Մեծ դեպքերի ու իրադարձությունների մեջ նրանց կյանքը չի ներքաշվում, հոգեբանական եւ գաղափարական մեծ տատանումներ նրանք չեն ունենում, եւ արդյունքը լինում է այն, որ մարդիկ մանրանում են, փոքրանում եւ դառնում են անհետաքրքրական: Կյանքի այս պատկերի իրական արտացոլմամբ հանդերձ՝ գրողը պարտավոր է այդ հոգեկան, մարդկային արժեքների նվազեցման ու անկման վերաբերյալ ունենալ իր դիրքորոշումը, հեղինակային մեկնակետը: Դա նախ վերաբերում է հեղինակի աշխարհայացքին եւ կենսափիլիսոփայությանը, ինչը կողմնորոշող եւ կյանքի փաստը իմաստավորող դեր կարող է ունենալ: Հակառակ դեպքում անհետաքրքրական կյանքի նույնքան անհետաքրքրական արտացոլումը միայն ձանձրույթ կարող է պատճառել:

Անցյալի հիմքով պայմանավորված՝ ժամանակակից կյանքի գեղարվեստական պատկերման, այդ կյանքին հատկանշական հերոսների հայտնաբերման տեսակետից առանձնանում են նաեւ Վահագն Գրիգորյանի վիպակները:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Բիոէթիկայի եւ իրավագիտության զարգացման հեռանկարները 21-րդ դարում

➥ էջ 5

Բիոէթիկայի հարցերը քրեական դատավարության մեջ

Քրեական դատավարության մեջ լինում են իրավիճակներ, երբ ապացույց հավաքելու նպատակով մարդու մարմնից անհրաժեշտ է վերցնել արյան, մեզի, մազի, սերմնահեղուկի եւ այլ արտաթորանքների նմուշներ: Գործնականում նաեւ լինում են դեպքեր, երբ մարդը, օրինակ, թմրամիջոցները պետական սահմանով անցկացնելու նպատակով թաքցնում է իր օրգանիզմում:

Հարկադրաբար նմուշներ վերցնելու կամ մարդու օրգանիզմում թաքնված թմրամիջոցները ձեռք բերելու նպատակով քննարկվում են հարկադիր բժշկական միջամտության թույլատրելիության հարցերը:

Բիոէթիկայի հարցերը քրեական եւ քրեակատարողական իրավունքներում

Քրեական իրավունքում քննարկվում են մարդու օրգանների առուվաճառքի, ապօրինի աբորտի եւ բիոէթիկայի տիրույթում առկա շատ հարցեր: Վերջին ժամանակներում ակտիվացել են նաեւ կալանավորված անձի կամ դատապարտյալի՝ սննդի ընդունումից գիտակցաբար հրաժարվելու դեպքում նրա կամքին հակառակ կամ նրա կամքից անկախ, մասնավորապես սննդի ընդունումից հրաժարված կալանավորված անձի կամ դատապարտյալի գիտակցության մթագնման կամ կորստի, ինչպես նաեւ կոմայի մեջ ընկնելու պարագայում, համապատասխան անհրաժեշտ բժշկական միջամտության իրավաչափության խնդիրները:

Բիոէթիկայի խնդիրները մասնավոր իրավունքում

Քաղաքացիական իրավունքում քննարկվում են մարդու կենսաբանական օբյեկտները (առանձին օրգաններ, հյուսվածքներ, այդ թվում՝ արյունը, մարդու մահից հետո

նրա մարմինը, մարդու վերարտադրումը պայմանավորող կենսաբանական օբյեկտները)՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ դիտարկելու խնդիրը: Կենսաօբյեկտները մարդու մարմնից առանձնացվելու պայմաններում ձեռք են բերում քաղաքացիական իրավունքի օբյեկտներին հատուկ հատկանիշներ (օգտակարություն, առանձնացվածություն), ուստի կարող են դառնալ քաղաքացիական իրավունքի օբյեկտներ: Մարդու օրգանիզմից անջատվելուց հետո կենսաօբյեկտների նկատմամբ մարդը ձեռք է բերում սեփականության, ինչպես նաեւ այլ գույքային իրավունքներ (*Аполинская Н. В., Биологические объекты человека в гражданском праве Российской Федерации. Автореф. дис. канд. филос. наук. Иркутск, 2009, с. 7*):

Կենսաօբյեկտների գույքային շրջանառության խնդիրները քրեաիրավական եւ քաղաքացիաիրավական համալիր ուսումնասիրության կարիք ունեն, քանի որ ՀՀ քր. օր. 132-րդ հոդվածում օրգանները կամ հյուսվածքները վերցնելը դիտարկվում է որպես մարդու շահագործման ձեւ:

Բիոէթիկայի իրավական կարգավորման համառոտ պատմությունը

Բիոէթիկայի իրավական պատմությունն սկսվում է 1947 թ. Նյուրնբերգյան դատավարությունից, երբ մարդկությունը քննադատեց նացիստական բժիշկների կողմից մարդկանց նկատմամբ կատարված հակամարդկային հետազոտությունները: Նյուրնբերգյան դատավարության ընթացքում պարզվեց, որ նացիստական բժիշկներն սպանել են ֆիզիկական եւ հոգեկան սահմանափակումներ ունեցող եւ հասարակության համար «անպիտան» 70 000 մարդու:

Աշխարհն առաջին անգամ կասկածի տակ դրեց բժշկի բարեխղճությունը եւ բժշկական էթիկան, եւ այդ ժամանակ մշակվեցին մարդկանց նկատմամբ հետազոտություններ կատարելու բարոյաիրավական առաջին կանոնները («Նյուրնբերգյան վարքականոն»):

1960–1970 թթ. ԱՄՆ-ում նույնպես բացահայտվեցին մարդու նկատմամբ բժիշկների հակամարդկային փորձարկումների դեպքեր: Այսպես՝ 1963 թ. Բրուկլինի՝ քրոնիկական հիվանդություններից տառապող անձանց համար նախատեսված հրեական հիվանդանոցում փորձարկման նպատակով տարեց անձանց, առանց նրանց համաձայնության, ներարկում էին քաղցկեղային ակտիվ բջիջներ: 1965–1971 թթ. Նյու Յորքի հիվանդանոցներում ֆիզիկական արատներ ունեցող երեխաների նկատմամբ իրականացվում էին հեպատիտ վիրուսի փորձարկումներ (*Силуянова И. В., Вызов биоэтики сегодня: Католический симпозиум по биоэтике сегодня. Альфа и Омега. М., 1998, №4*):

Հակամարդկային փորձարկումներ իրականացվել են նաեւ խորհրդային պետությունում: Այսպես՝ 1926 թ. պետական անվտանգության մարմիններում այնպիսի թույն արտադրելու աշխատանքներ էին իրականացվում, որը մարդու մարմնում հետքեր չէին թողնում, ինչպես նաեւ դեղամիջոցներ, որոնց ազդեցությամբ մարդը կտար իրականությանը համապատասխանող ցուցմունքներ: Այս փորձարկումներն իրականացվում էին դատապարտյալների կամ նախնական կալանքի տակ եղող անձանց նկատմամբ: «Նյուրնբերգյան օրենսգրքին» զուգահեռ կարեւորվեց նաեւ 1964 թ. Բժշկական համաշխարհային միության ընդունած «Հելսինկյան հռչակագիրը»: Նշված փաստաթղթերի հիմնական տարբերությունը հետեւյալն է. «Նյուրնբերգյան օրենսգիրքը» հնարավորություն չէր տալիս գիտական հետազոտություն իրականացնելու այն մարդու նկատմամբ, որն այս կամ այն պատճառով զրկված էր համաձայնություն տալու հնարավորությունից: «Հելսինկյան հռչակագիրը» տարանջատում էր բուժվողի շահերից բխող *ախտորոշիչ ու բուժական* նպատակներ հետապնդող (կլինիկական կամ թերապեւտիկ հետազոտությունները) եւ ախտորոշիչ նպատակներ չհետապնդող զուտ գիտական հետազոտությունները:

Շարունակելի

Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. դոկտոր

ՄԱՐԿ ԿՈՌԼԵՐ

ՀՈՒԴԱՆ

➥ էջ 3

Արդյոք իրենց ձեռքո՞ւմ են պահում զանգվածներին, որոնք գալիս են Հիսուսին ցնծությամբ դիմավորելու Ծաղկազարդի՝ կիրակի օրը: Դեպքերն այնպես, ինչպես ընթացան, ի վերջո, ապացուցում են, որ առաջնորդներն այնքան էլ վստահ չէին ամբոխի վրա իրենց ազդեցությանը. նրանք կատաղում են, երբ տեսնում են, թե ինչպես Պիղատոսը դատավարությունը երկարաձգում է (Հովհ. ԺԸ 30) ու թույլ է տալիս ամբոխին, շնորհիվ այդ երկարաձգման, բարձրանալ պալատ (Մարկ.ԺԵ 8): Նրանք պետք է գործադրեն իրենց ողջ խորամանկությունը, որպեսզի բազմությանը ստիպեին գոռալ ազատել «Բարաբբային» (Մատթ. ԻԷ 20): Դա ապացուցում է, որ ամբոխի հաշիվ մաքրելը վտանգավոր ձեռնարկ էր: Դավադիրների հաշվարկներով գործը պիտի հանգուցալուծում ստանար Զատկից հետո:

Ամբոխի հանդեպ վախի փաստարկին ավելանում է մեկ այլ փաստարկ եւս: Ամեն ինչ այդ գիշեր՝ հինգշաբթի՝ լույս ուրբաթ, արագացվում է ու թողնում չնախատեսված, հանպատրաստից կատարված գործողության տպավորություն: Առաջնորդները, թվում է, հանկարծակիի են գալիս: Հապճեպ սանհեդրին են գումարում: Նիստը վատ է նախապատրաստված: Վկաների հայտարարություններն իրար չեն բռնում: Արեւը ծագելուն պես մահճակալից հանում-բերում են հռոմեացի կառավարչին: Ժամանակը սուղ է: Կբավականացնի՞ այն մինչեւ եկող շաբաթ օրը: Ամենայն ակնհայտությամբ՝ այդ իրադարձությունները պետք է տեղի ունենային ավելի ուշ՝ տոնակատարությունից հետո: Այդպիսին էր կազմված ծրագիրը:

Արդ, մենք ասացինք, որ այն չպահպանվեց: Հիսուսը ձերբակալվեց, դատվեց ու դատապարտվեց տոնի ընթացքում: Ո՞ւմ պատճառով տեղի ունեցավ այդ կտրուկ շրջադարձը. Հուդայի: Հենց Հուդան էր արել այնպես, որ դեպքերը զարգանային նախատեսված ժամանակացույցից առաջ:

Հուդան պայմանավորվել էր քահանաների հետ: Նա նրանց ասել էր. ես նրան կհանձնեմ ձեզ, երբ մի նպաստավոր առիթ ներկայանա: Հուդան համարեց, որ այդ նպաստավոր պահը վրա էր հասել: Շնորհիվ Հուդայի միջամտության ու նրա նախաձեռնության՝ ձարբակալությունը տեղի ունեցավ հինգշաբթի՝ լույս ուրբաթ գիշերը:

Հուդան չէր կարող չիմանալ պաշտոնական հրամանի մասին: Եթե հրեաներն իրենք իրենց մեջ ասել էին՝ «տոնից ոչ շուտ», նրանք դա պիտի ասած լինին նաեւ Հուդային. դու նրանց կհետեւես ու նրան կհանձնես նախքան կթողնի քաղաքը: Եվ, ահա, Հուդան համարեց, որ լավ կլինի, եթե օրն ու ժամն առաջ ընկնեն: Ինչո՞ւ դեպքերն առաջ ընկան: Քահանաները վախենում էին տոնից՝ ամբոխի պատճառով: Եթե Հուդան նրանց համոզեց հաղթահարել իրենց տատանումները, ապա այն պատճառով, որ հանուն իր ծրագրերի՝ նա ամբոխի եւ կամ տոնակատարության կարիք ուներ: Թե՛ զատկական տոնակատրությունը, թե՛ ուխտավորների անսահման զանգվածն անչափ կարեւոր էին՝ ըստ իր հաշվարկների:

Նախ՝ ամբոխի մասին: Քահանայապետերի ու սադուկեցիների համար, որոնք դավադրություն էին հյուսել Հիսուսի դեմ, այդ բազմաթիվ հանդիսատեսները կարող էին խանգարող հանգամանք լինել: Բայց այդ տղամարդիկ ու կանայք, որ խանգարող համգամանք էին պաշտոնատարների համար, կարող էին Հուդայի համար ցանկալի լինել: Դա լսարան էր, հանդիսատես: Կայի՞ն արդյոք պատճառներ, որոնք ստիպեին Հուդային ցանկանալ, որ նման մեծ լսարան ականատես լիներ իր մատնությանը:



Անշո՛ւշտ: Հասարակայնությունը վկա է: Լսելով ու նայելով՝ նա գրանցում է:

Փորձենք մեկնաբանել Հուդայի արարքը այդ տեսակետից: Իսկապես, հնարավոր է, որ Հուդան, գնալով նահապետների մոտ, հետ է կանգնում իր խոսքերից: Երեւի նա հասկացել էր իր սխալը: Քրիստոսը, իր կարծիքով, օծյալության սուտ հավակնորդ է: Նրա ուսուցումը, ինչ էլ նա դրա մասին ասի, ավելի խախտում, քան կիրարկում է Մովսեսի օրենքը: ➥ էջ 8

Նիկոլ Դուման –155

➥ էջ 3, 5

Երեւանի հայերի եւ թուրքերի գարնանային առաջին ընդհարումը տեղի է ունենում 1905 թ. մայիսի 12-ից 15-ը. կողոպուտ, ջարդ, հրդեհ, մեծ թվով զոհեր հայերից: Հետագա անելիքները համակարգելու համար կազմվում է «Երեւանի նահանգի զինվորական մարմին»՝ Դումանի ղեկավարությամբ, սահմանվում է խստագույն կարգապահություն՝ առիթ չտալ եւ նախահարձակ չլինել: Մայիսի 21-ին ընդհարումները դադարում են: Բայց նոր ու ավելի ուժգնությամբ ընթանում են մայիսի 22–24-ին:

Երեւանի թաղերում տեղակայված խմբերը Դումանի գլխավորությամբ արժանի հակահարված են տալիս թուրքերին: Ընդհարումները շարունակվում են երկու տարի:

Դումանի տուն-թանգարանը

Դումանի խորհրդով՝ Ղարաբաղի շրջանի ընդհանուր հրամանատար է կարգվում Խանասորա Վարդանը, նաեւ Համազասպը, Նախիջեւանի մարտախմբի հրամանատար է նշանակվում Դաշնակ Խեչոն, գործադրվում է փոխվրեժի սկզբունքը: Դումանը լրացուցիչ մարտական ուժեր է ուղարկում Նախիջեւան՝ Վանա Սարգսի (Բարսեղյան) գլխավորությամբ, որոնք տեղ են հասնում հունիսի սկզբներին: Մեսրոպ Տեր-Մովսիսյանն օգնում է զինելու 150 հոգանոց մարտախումբը, որի զգալի մասը նախկին զինվորներ էին:

Մեսրոպ Տեր-Մովսիսյանը (Մեսրոպ Մագիստրոս) ծնվել է 1865 թ. մայիսի 7-ին Զանգեզուրի գավառի Շիկահող գյուղում: 1882 թ. ավարտել է Շուշիի թեմական դպրոցը, 1885 թ.՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1890 թ.՝ Դորպատի համալսարանը: Մասնագիտական գիտելիքները կատարելագործել է Վիեննայում, Փարիզում, Երուսաղեմում, Լոնդոնում, Բեռլինում, Վենետիկում: 1902 թ. Մ. Տեր-Մովսիսյանն ստացել է հայ բանասիրության մագիստրոսի աստիճան: 1913–1916 թթ. եղել է Վրաստանի եւ Իմերեթիայի, իսկ 1917 թ.՝ Աստրախանի թեմական առաջնորդը: 1922–1932 թթ. գլխավորել է Պարսկա-Հնդկաստանի թեմը: 1919 թ. հրավիրվել է Հայաստանի նորաբաց համալսարան՝ որպես հայ գրականության եւ կրոնական մատենագրության առարկաների պրոֆեսոր, եղել է պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկանը: Մ. Տեր-Մովսիսյանը 130 գիտական աշխատությունների հեղինակ է, որոնցից հատկապես արժեքավոր են «Ուղեւորութիւն Տ. Տ. Մկրտիչ Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Երուսաղեմից էջմիածին» (1894), «Հայ գիւղական տունը» (1894), «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն թարգմանեաց Փիլոն Տիրակացի եւ Պատմութիւն վարուց սրբոյ Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ թարգմանեալ Աբասու Գրիգորի Ձորափորեցւոյ» (1897), «Նկարագրութիւն հոգեւոր վարուց Հովասափու, որդւոյ թագաւորին Հնդկաց» (1897): Մ. Տեր-Մովսիսյանը վախճանվել է 1939 թ. հունիսի 3-ին:

150 հոգանոց մարտախումբը հունիսի 12-ի գիշերը հարձակվում է Ջահուկի վրա, որի հայ բնակիչներին մինչ այդ կոտորել էին թուրքերը:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

«Գեւորգ Մարզպետունի» պատմավեպը...

➥ էջ 4, 6

Այս բոլոր անցքերը մեզ հասել են Դրասխանակերտցու պատմության շնորհիվ. «Եվ ապա ոստիկանը, ցանկանալով Սմբատ արքայի չարաչար մահը, տակավին սկսում է կտտանքներով նրան տանջել... Դաժան ու սաստիկ կտտանքներից, խոշտանգումներից ու քրտնահար չարչարանքներից հետո սրով կտրում են նրա գլուխը՝ զրկելով այս կյանքից. նա թագավորեց 22 տարի: Իսկ ապականությամբ ու անսուրբ պղծությամբ լեցուն ոստիկանը չի հրամայում նրա մարմինը հողին հանձնել, այլ տարածելով փայտի վրա՝ գամերով ամրացնում էին Դվին քաղաքում: Որովհետեւ ով թաղված էր Քրիստոսի հետ մարտիրոսական մահով, նա պարտավոր էր նրա հետ խաչակից լինել» (243): Պատմական այս փաստերը մոռացության չեն մատնվել եւ իրենց արձագանքն են գտել պատմավեպում: Մուրացանի վեպը, ճիշտ է, ներկայացնում է Սմբատի որդու՝ Աշոտի գահակալության տարիները, բայց վեպի մի քանի գլուխներ հետադարձ հայացք են պատմությանը: Աշոտ արքայի կնոջ՝ Սահականույշի եւ նրա դայակի՝ Սեդայի զրույցները ջրի երես են հանում կատարված իրադարձությունները: Պատմական փաստերին անտեղյակ ընթերցողը այս հատվածների միջոցով կտեղեկանա հայոց աշխարհի գլխին կախված աղետների ու իր դավաճան հայրենակիցների մասին: Սմբատ արքայի անմարդկային սպանությունը տեղի չէր ունենա, «եթե հայ իշխանները միանային, թեւ ու թիկունք լինեին իրենց դյուցազնասիրտ թագավորին եւ ընդհանուր ուժով դեմ դնեին հայրենիքի թշնամուն... Այդ թշվառությունը չէր պատահել, եթե տիրանենգ եւ դավաճան Գագիկ Արծրունին Վասպուրականում թագավորելու փառամոլությամբ կուրացած՝ չմիանար Յուսուփ ոստիկանի, յուր հայրենիքի անհաշտ թշնամու հետ, չկրկնապատկեր նրա կործանիչ ուժը, չբանար նրա առաջ փակված ճանապարհները, որի արդյունքը եղավ բազմաթիվ հայ զորքերի կոտորածը, բերդերի եւ ամրոցների առումը, ժողովրդյան ջարդը... Այնտեղ էր այդ ժամանակ եւ Գագիկ Արծրունին, հայոց Հուդան... Բայց ոչ. նրան Հուդա անվանել չի կարելի. Հուդան խիղճ ուներ, սիրտ ուներ. նա երբ տեսավ, որ յուր անմեղ ու բարի վարդապետին մատնել է երեսուն արծաթի համար, գարշեցավ յուր անձից եւ գնաց կախվեցավ: Բայց Գագիկ Արծրունին՝ երբ տեսավ, թե յուր շնորհիվ հայրենիքի պաշտպան, անձնվեր եւ քաջ թագավորը մատնված է թշնամու ձեռքը, հոգած յուր անձի անդորրության մասին, ձի նստեց եւ շտապեց յուր երկիրը, որպեսզի Յուսուփից ստացած եւ ազգից անիծված թագի փառքը ապահովության մեջ վայելե... Օ՜, եւ այդ հրեշը դեռ ապրում է աշխարհում...» *(Մուրացան, Գեւորգ Մարզպետունի, Եր., 1989, էջ 28: Այսուհետ այս հրատարակությունից արված մեջբերումների պարագայում կնշվեն միայն «Մ» տառը եւ էջահամարը):*

Սրանք Սահականույշ թագուհու դայակի՝ Սեդայի խեսքերն են: Աշխատության ընթացքում ակնհայտ է Դրասխանակերտցու չափազանց դրական վերաբերմունքը դեպի Սմբատ արքան: Այս երեւույթը նկատել է նաեւ Մ. Մկրյանը. «Պիտի ասել, որ Դրասխանակերտցու Պատմության կենտրոնական դեմքն ու սիրելի հերոսը Սմբատ Առաջինն է, եւ նրան ու նրա թագավորության անցքերին պատմիչն անդրադարձել է հանգամանորեն: Սմբատը պատմության մեջ ներկայանում է որպես իրոք մի հերոսական ու ամրակամ պետական գործիչ, մի ողբերգական կերպար... Որքան էլ Դրասխանակերտցին մեծ տեղ է հատկացրել Աշոտ Երկրորդի հերոսական պայքարին, այնուամենայնիվ, նրա վերաբերմամբ, Սմբատ Առաջինի հետ համեմատած, նկատվում է ջերմության որոշ պակաս» (*Մկրյան Մ., Երկեր, հատոր 1, Երեւան, 1987, էջ 407*):

Շարունակելի

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԿ ԿՈՀԼԵՐ

ՀՈՒԴԱՆ

➥ էջ 3, 7

Հարձակվելով փարիսեցիների օրինապաշտության վրա՝ նա հիմքից սասանում է հրեական կյանքի ավանդական հիմքերը, իսկ ժողովրդի առաջնորդների հանդեպ նրա ընդդիմությունը թուլացնում է ազգային ու կրոնական միասնությունը: Ուստի Հուդան ընկրկում է, մեղա է գալիս ու վերադառնում մայր սինագոգի գիրկը: Այդ քայլը, հասկանալի է, վկաներ է պահանջում: Այն իմաստ ունի միայն, եթե կան քաջալերողներ, որոնց ինքը պիտի դիմեր: Ամբոխը ծափահարելու է նրան...

Մի կարեւորագույն պատճառ ստիպում է մերժել այդ տեսակետը:

Ամբողջ գործի մեջ Հուդայի ներկայությունը բեմի վրա ու նրա ներքին զարգացումը բեմի լույսերի ներքո վերածվում են անկարեւոր դերի: Հռոմեացիների հետ նա գիշերը կգնա պարիսպներից դուրս գտնվող պարտեզը: Մատնելով գաղտնաժողովի տեղը, նա ցույց կտա նրան, ում պետք է բռնել: Խաղը խաղարկվում է, գործը՝ կատարվում: Հուդայի դերն ավարտվում է այստեղ: Ոչ մի հնարավորություն չկա իրեն ցույց տալու, որ զանգվածները հիանան ու հավանություն տան իր արարքին: Հուդան պետք է իմացած լիներ, որ իր արարքը պիտի աննկատ մնար: Ո՜չ, այստեղ ցանկալի բազմության փաստարկը դեր չի խաղում: Այդ վարկածը քիչ է հավանական, քանզի Հուդան, եթե իսկապես ուզենար կրոնական առաջնորդներին հնազանդվել, ապա պիտի հետեւած լիներ նրանց հրահանգներին, որոնք հրամայում էին մատնել Հիսուսին տոնից հետո:

Ուրեմն, պետք է փնտրել ուրիշ տեղ: Ուրիշ ինչի՞ կարող է պետք լինել ամբոխի ներկայությունը: Հուդան իր զոհին քահանայապետին հանձնելուց հետո անհետանում է, իսկ Հիսուսը մնում է: Նրան են տեսնելու ու լսելու հանդիսատեսները: Արդյոք Հուդան չէ՞ր ուզում այդ հանդիսատեսների ներկայությունը... Հիսուսի համար: Իսկապես հնարավոր է, որ Հուդան, գնալով մեծամեծների մոտ, վրեժ է լուծում: Նա վրեժ է լուծում Հիսուսից: Հիսուսը, երեւի, չի արդարացրել Հուդայի հույսերը: Հուդան սպասում էր բռնացող մարդու, բայց նա տեսնում է մեղմաբարո էակի. նա հույս ուներ, թե Հիսուսն ուժեղ էր լինելու, բայց տեսնում է թույլի. ինքը կոչ էր անում գործողության, բայց հայտնվում է չդիմադրողի առջեւ: Հուսախաբ լինելու պատճառներ կան մի աշակերտի համար, որն Աստծո արքայությունը պատկերացնում էր մարմնական, աշխարհիկ, երկրային, եթե չասենք, քաղաքական արքայության նման:

Որ այդ հուսախաբությունը կարող է տանել մի տեսակ սադիզմի, ինչո՞ւ ոչ. «Ես տառապել եմ, նա էլ կտառապի»: Նա կտառապի հրապարակավ, բոլորի առաջ, նա, ում ուղղված են հայացքներ, ով հանձնված է համընդհանուր պախարակության:

Ծանակող ու ծաղրող ամբոխի ներկայությունն իմ ուրախությունը կատարյալ կդարձնի....:

Մի զորեղ փաստարկ ստիպում է հրաժարվել այս վարկածից: Մենք գիտենք, որ Հուդան ինքնասպան եղավ: Եվ Մատթեոսի հատվածը ճշգրտում է այն պահը, երբ ծնվեց այդ անօգուտ մեղանչումը. «Այդժամ Հուդան, որ նրան մատնեց, տեսնելով, որ նա (Հիսուսը) դատապարտվեց, զղջաց ու երեսուն արծաթները հետ տվեց քահանայապետներին ու նահապետներին՝ ասելով. «Մեղանչեցի, որովհետեւ արդար արյուն մատնեցի» (Իէ 3): Արդ, տեսնելով, որ Հիսուսին ենթարկեցին մահապատժի... Հուդան հանկարծակիի է գալիս: Նա հռոմեական կառավարչից նման դատավճիռ չէր սպասում: Հիսուսին մատնելով՝ Հուդան չէր ուզում, որ նա մահապատժի ենթարկվեր: Նա հաշվի չէր առել այն փաստը, որ Հիսուսին պիտի մահվան դատապարտեին: Եթե նա սառնասրտորեն կանխատեսած լիներ ամեն ինչ, եթե իր երեւակայության մեջ կանխավ տեսած լիներ խաչյալ Քրիստոսին, մեղանչելու փոխարեն, պիտի բավարարություն ստանար, որպես մի մարդ, ով իր նպատակն իրականացած է տեսնում:

Մենք ենթադրեցինք, թե ամբոխը հիմնական տեղն էր զբաղեցնում Հուդայի հաշվարկներում: Բայց դա այդպես չէ: Մարդկանց բազմություն չէ, որ ինքը փնտրում է իր արարքի համար: Բազմությունը հոծ է քաղաքում զատկական տոնի պատճառով: Այդ դեպքում գուցե տո՞ն էր, որ կարեւոր էր Հուդայի համար: Արդյոք նա ձգտո՞ւմ էր բռնել տալ Հիսուսին տոնի ընթացքում:

Հրեական Զատիկը տոնն է այն մեծ իրադարձության, երբ Բարձրյալը հրեաներին դուրս բերեց Եգիպտոսից՝ մեծ ազատագրության հիշատակի օրը («Ես քեզ դուրս բերեցի Եգիպտոս երկրից, ստրկության տնից»), բայց նաեւ հույսի արտահայտություն է: Աստված, որ եկավ, էլի պիտի գա: Հրեական Զատիկը սերտորեն կապված է Օծյալի սպասման հետ: Եթե Օծյալը գա, ասում են այդ ժամանակի տեքստերը, դա կլինի Զատկին: Զատիկը դասական, նախատեսված ու վերապահված մի տարեթիվ է, երբ Օծյալը կմտնի պատմության մեջ ու այն տակնուվրա կանի:

Շարունակելի

Ֆրանսերենից թարգմանությունը՝
Գառնիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 2.02.2022 թ.
Տպաքանակը՝ 1225